ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

21.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/122

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.08.2018թ. թիվ 02/26-3/14429-18 գրությամբ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 07.08.2018թ. թիվ 1.4/13.1/1706-18 գրության հիման վրա, 09.08.2018թ. թիվ 02/26-3/14429-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/122 ընթացակարգի շրջանակներում 14.08.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր նշել են, որ Ընկերությունը մարել է ունեցած պարտավորությունները և հայտը ներկայացնելու օրը «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն և որպես ապացույց ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել են համապատասխան վճարը կատարած լինելու փաստը հավաստող փաստաթուղթը:

3. **<u>ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.08.2018թ. 1.4/13.1/1706-18 գրությամբ ներկայացրել է «ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-07/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաղթող ճանաչված «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը, նշելով, որ Ընկերության հայտը մերժվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն, ըստ որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/122 ընթացակարգի շրջանակներում 14.08.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2018/122 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2018/122 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից իր կարիքների համար օպերացիոն համակարգի բարելավման համակարգչային ծրագրային փաթեթների ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-07/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 25.07.2018թ. հայտ է ներկայացրել «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-07/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 31.07.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 79 598 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.08.2018թ. թիվ 02/26-3/14429-18 գրությունը, ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 07.08.2018թ. 1.4/13.1/1706-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի 25.07.2018թ. թիվ 740 վճարային հանձնարարականը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից իր կարիքների համար օպերացիոն համակարգի բարելավման համակարգչային ծրագրային փաթեթների

ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-07/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***25.07.2018թ.*** հայտ է ներկայացրել «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-07/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 27.07.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 31.07.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 79 598 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի 25.07.2018թ. թիվ 740 վճարային հանձնարարականը, որի համաձայն Ընկերությունը ***25.07.2018թ.*** ՀՀ կենտրոնական գանձապետարանի «900008000490» հարկերի միասնական հաշվին կատարել է ***80 000 ՀՀ դրամի վճարում***:

Ընկերությունը ներկայացրել է նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 06.08.2018թ. թիվ 70-1/45320-18 գրությունը, համաձայն որի վերոնշյալ դեպքում միասնական գանձապետական հաշվին գումարը Կենտրոնական բանկի կողմից հաշվեգրվել է 26.07.2018թ. հետևապես առկա 79 598 ՀՀ դրամ պարտավորությունը ՀՀ

հարկային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, համարվել է կատարված այդ օրվա դրությամբ:

Այսպիսով, ուսումնասիրելով «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 25.07.2018թ. թիվ 740 վճարային հանձնարարականը, արձանագրում եմ, որ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն ***«ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-07/18» ծածկագրով ընթացակարգին հայտը ներկայացնելու օրը՝ 25.07.2018թ., հարկերի միասնական հաշվին կատարել է 80 000 ՀՀ դրամի վճարում:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 31.07.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 79 598 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված 25.07.2018թ. թիվ 740 վճարային հանձնարարականը, գտնում եմ, որ այնուամենայնիվ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն «ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-07/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ նշված վճարային հանձնարարականի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու

օրը կատարել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած իր հարկային պարտավորությունները՝ կատարելով համապատասխան չափի վճարում:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի 25.07.2018թ. թիվ 740 վճարային հանձնարարականը, գտնում եմ, որ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.08.2018թ. թիվ 02/26-3/14429-18 գրությամբ՝ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00179369) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**